ստորագրեն զանոնք ։ Թէպէտ բոլոր աշխարհ չար կը սեպեր զիրենք, 'ի վերայ այսր ամենայնի աստուածոց կարգը դասուեցան, և 'ի Կորնթոս տաճարի մը մէջ բագին մը նուիրուած էր իրենց, որուն վրայ զոհեր կ'ըլլուէր ։

Սակայն դիցաբանները իրեք զանազան տեսակ Կիկլոպայք կը դնէին. Ա. Հեսիոդոսի յիշատակած Կիկլոպաները, որոնք այլաբանական էակներ էին. Բ. 'ի Հոմերոսէ Սիկիլիոյ բնակիչք սեպուածները. Գ. այն Կիկլոպայքը, որ կը պաշտուէին 'ի Կորնթոս իբրև ճարտարապետութեան հնարողք ։

Արդի գիտունները Կիկլոպայից առասպելին ուրիշ բան չեն համարիր՝ բայց եթէ հրաբուխներու խորհրդական նշանակը. և իրենց կարծիքը հետևեալ պատճառներով կը հաստատեն ։ Հինները Կիկլոպայից դարբնոցները Սիկիլիոյ Էտնա լերան տակ, և Լեմնոս ու Լիպարի կղզեաց մէջ կը դնէին, որ անոնք ալ առջինին պէս հրաբուխ ունին ։ Կիկլոպայք որդիք էին Երկնից և Երկրի, որովհետև հրաբուխներուն գլուխը բարձր է երկրիս երեսէն և արմատը հողուն խորը. կամ որդիք Պոսիդոնի, որովհետև սովորաբար ծովը այս լերանց ստորոտը կ'ողողանէ ։ Հսկայաձև էր հասակնին, վասն զի հրաբուխները շատ բարձր են. մէկ փայլուն աչք մը միայն ունէին իրենց ճակտին մէջտեղը, որ կը նշանակէր հրաբուխներու խառնարանը ։ Իրենց դարբնած կայծակները կը շինէին իրեք իրեք ճառագայթներով ջրոյ, մգի և հրոյ, որ ակնարկութիւն է այն երևոյթներուն՝ որ կը տեսնուէին հրաբուխներու պատառման միջոցը ։

ԾԱՂԿԱՔԱՂ ԵՒՐՈՊԱԿԱՆ

Կեանք մարդկան ։

Իբրև զճանապարհ են կեանք մարդոյ, ուր սպառուած հայի յանդունդս ահագին ։ Յայս խրատիմք անդստին յառաջին քայլափոխից. այլ տուան օրէնքն, յառաջել հարկ է անդուլ ։ Անդրէն դառնալ ախորժեմք. յառաջ, յառաջ ։ Աներեան անվկանդ և բուռն զօրութիւն վարեն զմեզ, և յանդունդս անդր հարկ է փութալ ։ Ուր խէթ և խութք և բազմաբեւր ցաւք պարտասեն զմեզ և տագնապեն յուղւոջ ։ Իցիւ թէ էր ինչ և այնպէս ճողոպրել յահագին անդընդոցն. ոչ, ոչ. հարկ է յառաջել, ընթանալ պիտի ։ Այսպէս սրավար են ամք ։ Այլ քերեալ մերթ ընդ մերթ առ հեզասահ վտակօք և առ ծաղկամբք որ անցանեն՝ մխիթարիմք նոքօք ։ Ախորժեմք անդ առնուլ զտեղի. յառաջ, յառաջ ։ Եւ ահա թաւալի 'ի թիկանց մերոց ամենայն ընդ որ անցաք, կործանումն ահեղ, բեկումն մեծ ։ Ինդամք փոխանակ զի ածեմք ընդ մեզ փունջ ծաղկանց քաղելոց զճանապարհայն, զորս յառաւօտէ ցերեկոյ տեսանեմք թառամեալս 'ի ձեռին, և միրգս՝ զոր սպառեմք ճաշակմամբ ։ Ցնորք, պատրանք ։ Յանդ քարշեալ մերձիմք 'ի վիհն ահագին ։ Ամենայնի սկիզբն լինի նսեմանալոյ. պարտէզք կարճեն զծաղիկս, ծաղկունք զփայլ գեղոյն և զերանգոյն կենդանութիւն, մարգագետինք ոչ այնպէս ծիծաղախիտք, ջուրք ոչ նոյնպէս ականակիտ. աղօտանայ ամենայնն, ամենայն ինչ նսեմանայ ։ Ընդառաջեն ստուերք մահու, և գուշակեմք զանձինս հուպ 'ի բերան անդնդոյն մահաւիթ. այլ անհրաժեշտ է գնալ յեզերուն ։ Բայց մի ևս և ահա քստմունք գնան ընդ անդամս, ցնորին միտք, աչք մթագնին ։ Յառաջել պէտք են ։ Յօժարիմք այսրէն դառնալ. չիք հնար. ամենայն ինչ կործան, ամենայն ինչ անհետ, ամենայն ինչ փախստական ։

ԲՈՍԻՒԷ